

ԳԼԺԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

(Պ. ԲԵՐԼԻՆԻ)

Նրկաթուղիների երկաթագծերը, նաև երի ու չոգենաւերի ռւղին, փոստային հաղորդակցութիւններն ու հեռագրական թելերը երկրագունդն իբրև մի անխզելի ամբողջութիւն կապել են, նրա ամենահեռաւոր ծայրերի մէջ ապրանքների, մարդկանց, գաղափարների մի կենդանի փոխանակութիւն հաստատելով: Մարդիկ, գաղափարներ, երոպական քաղաքակրթութեան ապրանքները շարունակ աճող քանակութեամբ մուտք են գործում երկրագնդի խուլ անկիւնները, շարժումն և քայքայումն յառաջ բերելով վայրենիների և կիսավայրենիների դարերով անփոփոխ կեցած մտածողութեան ձևի և գործունէութեան մէջ: Նրես առ երես հանդիպում են իրար այժմ ամենատարբեր տիպի և քաղաքակրթութեան աստիճանների տէր ժողովուրդներ:

Վայրենի և կիսաքաղաքակիրթ մարդկանց միլիոնաւոր մի բազմութիւն հարկադրուած է հետզհետէ աւելի և աւելի ընդհարուել բարձր քաղաքակրթութեան տէր մարդկանց հետ և՛ եթէ ոչ ըստ խղճի մտաց, գէթ առահի ընդունել վերջիններից կեանքի նոր ձև: Վայրենիների այս արագ աճող մերձեցումն քաղաքակիրթ ազգերի հետ շարունակ սրուող թշնամական յարաբերութիւն է ծնում նրանց մէջ:

Գրեթէ տարի չի անցնում, որ աշխարհի այս կամ այն մասում «պատերազմ» չբռնկի երոպացիների և վայրենիների մէջ. պատերազմներ, որոնց մասին հեռագրերը ասուրական լակոնականութեամբ հաղորդում են ճշրպացիներից երեք վիրաւոր կայ, վայրենիներից սպանուած են հազարի չափ: Նրբ ես այս տողերն եմ գրում, գերմանացիք Ռփրիկէում կռուում են ապստամբ Հերերների

հետ, իսկ Տիբէտում «վայրենիներին» խաղաղացնում են անգլիացիք:

Այս հանապազ սրուող և յաճախ պատերազմով ընդհատուող փոխադարձ յարաբերութեանց մէջ կրողացիները մեղադրում են վայրենիներին, որ չեն ուզում իւրացնել քաղաքակրթութիւնը, իսկ վերջինները մեղադրում են «սպիտակամորթ դերին», որոնք առանց այլապնութեան խլում են վայրենիներից նրանց հողը, նրանց գազաններին, նրանց հարստութիւնը, նրանց միամիտ ու պարզ հաւատը:

Մենք այստեղ չենք շարժի այն հարցը, թէ ինչից է ծագում այս ատելութիւնը. վայրենիների անընդունակութիւնից կամ չկամութիւնից քաղաքակրթութիւնը իւրացնելու թէ կրողացիների մանկավարժական անշնորհքութիւնից կամ չկամութիւնից վայրենիներին հաղորդ դարձնելու քաղաքակրթութեան: Այս յօդուածում մենք կամեցանք վայրենի և քաղաքակիրթ մարդկանց ընդհարումների համառօտ նկարագիրն անել լոկ և ցոյց տալ թէ որչափ եւ կոպիտ եւ նրբացրած դաժանութիւն արտայայտեցին և արտայայտում են կրողացիները դէպի վայրենիները և թէ որքան անհրաժեշտ է նախ և առաջ վերջ տալ նոյն ինքն քաղաքակրթեալների բարբարոսութեան ու դաժանութեան վայրենիներին քաղաքակրթութեանը յաջողութեամբ մասնակից անելու համար:

ԺՁ և ԺԵ դարերում, երբ անդադար արնհեղ ընդհարումներ էին յառաջ դալիս կրողացիների և Ամերիկայի վայրենիների մէջ, շատ ուսումնական մարդիկ, դեռ չը խօսենք անուանների մասին, լրջօրէն հաւատացնում էին թէ վայրենիները մարդ էլ չեն: Ականաւոր Պարացէլսիոսը և Պէրէյրան ապացուցադրում էին թէ մարդկութիւնը բաժանուած է աղամականների՝ Ադամի սերնդի, և նախադամականների՝ հետ մարդակերպ արարածների սերնդի, որոնք Ադամից յառաջ են ստեղծուել: Հէնց նախադամականներից էլ ծագել են վայրենիները: Վայրենիները ասես թէ մարդ ստեղծելու առաջին անյաջող փորձն են և նրանց մարդ անուանել չի կարելի, ուստի և նրանց հետ պէտք է այնպէս վարուել, որպէս ընտանի անասունների հետ: Գործնականութիւնը լիովին համապատասխան էր այս տեսութեանը և 1537 թ. յունիսի 9 Հռոմի պապը պէտք համարեց մի յատուկ թուղթ՝ հրատարակել, ուր յայտարարում էր թէ մանրակրկիտ ուսումնասիրութիւնից յետոյ հռոմէական եկեղեցին եկաւ այն

եզրակացութեանը թէ Ամերիկայի վայրենիները իսկական մարգիկ են և ընդունակ քրիստոնէական վարդապետութիւնն ըմբռնելու...

Պրանից բաւական ուշ կրոպացիները նեգրոսներին մարդ չէին համարում և 400 արծաթ տուգանքի սպառնալքով արգելում էին նեգրոսներին գրակարդացութիւն սովորեցնել կամ քրիստոնէական եկեղեցիների մէջը թողնել: Սկրոպացիները վայրենիներին մարդ ընդունում էին թէ ոչ, յամենայն դէպս նրանց հետ առաւել վատ էին վարում, քան ընտանի անասունների հետ:

ԺԹ-րդ դարու երեսնական թուականներին Պորտուգալացիները արհեստական կերպով ծաղիկ և կարմրուկ էին տարածում հնդիկների մէջ այդ հիւանդութիւններով մեռածների հագուստները նրանց բաժանելով: Սկրոպացի կանայք, ինչպէս վայացն է առում, աւատրալիական վայրենիների սովի ժամանակ նրանց մկնդեղով խառնած ալիւր էին բաժանում:

Վերստոնէական ժողովրդների բարբարոսութիւններն ու խստութիւնները, որ նրանք արտայայտում են աշխարհի ամէն անկիւններում դէպի այն բոլոր ժողովուրդները, որոնց նրանք նուաճել են ուղում, իրենց արժանի գուգագիծը չունին ոչ մի ազգի մէջ պատմական զարգացման ամբողջ ընթացքում, որքան էլ նրանք վայրենի, անկիրթ, դաժան և անամօթ եղած լինին՝ գրում է Վիլիամ Հովորտը իւր «Վաղղթներ ու Քրիստոնէութիւն» շարադրութեան մէջ, 1703 թ. անգլիական պուրիտանները որոշեցին 400 արծաթի դրամական պարգև տալ հնդիկների իւրաքանչիւր կառավի համար. 1720 թ. այդ պըէմիւն 1000 արծաթի հասցրին: Անգլիական պարլամէնտն էլ շնորով բզկտելու պատժի որոշումն արաւ հնդիկների համար «ընտէրեան և Աստուծոյ տուած այս զէնքով (K. Marx. Das Kapital) Hamburg 1890 երես 718):

Դեռ անցեալ դարում պօրտուգալացիք Բրազիլիայի լճակները թռնաւորում էին, որպէս զի տեղացի վայրենիներից ազատուին:

Բայց թերթեմք վայրենիներին քաղաքակրթելու պատմութեան՝ կրոպական ուսուցման այս արնգոյն երեսները և դառնանք դէպի կենդանի արդիութիւնը:

Մի քանի տարի առաջ գերմանական Ռայխստագում և Ֆրանսիական պատգամաւորների պալատում խորհրդածւում էր

գերմանացիների և ֆրանսիացիների գործունէութիւնը վայրենիների մէջ, Մանօթանանք այդ խորհրդածութիւնների ժամանակ արտայայտուած փաստերի հետ: Սկսե՛նք Գերմանիայից և նրա Աֆրիկէի պաշտօնական ներկայացուցից՝ փիլիսոփայութեան դօկտօր Պետերսից: Պետերսը մի ճանապարհորդութիւն յանձն առաւ Աֆրիկէում գերմանական մի կողած ճանապարհորդի որոնելու համար ճանապարհին պատահող բոլոր ցեղերը պէտք է անմիջապէս հնազանդութեան և յարգանքի նշաններ ցոյց տային մեր փիլիսոփայութեան դօկտօրին. այլապէս նրանց մահ էր սպառնում: Ինքը Պետերսն է պատմում. «Որպէս զի ազդեցիկ օրինակ տանք, մենք մի տեղ վաճաղանքի վեց գիւղ մէկէն կրակ տուինք»: Մի անգամ Պետերսը պատահեց մի խումբ բնիկների, որոնք մացառների մէջ նստած էին թիկունքները դէպի Պետերսի վաշտն արած, որը անկասկած ցոյց էր տալիս, թէ նրանք խաղաղ արամադրութեան մէջ էին: Սակայն և այնպէս Պետերսը հրամայում է խմբական հրացանաձգութեան բռնել խաղաղ և անմեղ բնիկներին: «Հէնց որ մեր հրազէնների լիցքը, ասում է Պետերսը, նրանց թիկունքով անցաւ և միքանի բնիկ՝ որ ծառերի վրայ նստած էին, իրենց ցանկութեանը հակառակ, անսովոր արագութեամբ գետին թափուեցան, վաճաղանքը իսկոյն մաքրեցին դաշտը... Միայն մեզնից արևմուտք, բլրի վրայ ամբողջ օր վաճաղների պահակ կար կանգնած, Հաց ուտելուց յետոյ ես վաշտը այդ պահակի վրայ ուղղեցի. բայց բլրի վրայ կանգնած մարդիկը դարձան ինձ այսպիսի հարցով թէ ի՞նչու են նրանք իրենց վրայ հրազէն պարսլում, քանի որ իրենք ամենեին չեն կամենում պատերազմել նրանց հետ:

— Ինչո՞ւ համար էք այդտեղ վերևումը նստել, հարցրի նրանց:

— Մենք կուռում ենք Զակամբաների դէմ, որ նստած են բլրի միւս կողմում:

— Որ այդպէս է, պատասխանեցի ես, բարի ակորժակ եմ ցանկանում:

Մասսա ցեղի կենդրոնին՝ Ելիաստին մօտենալով, Պետերսի վաշտը կրակի է մատնում այդ գիւղը ութ տեղից: «Սարսափից ու դժբաղտութիւնից զոռալով ու գոչելով մացառների մէջ ցրուած Մասսաները վերջապէս իմացան մեր մտադրութիւնը... Այն ժամանակ երբ Գերմանիայում երեկոյեան զանգը

հրաւիրում էր ժողովրդին ժամապաշտութեան, այստեղ կրակների լայնածաւալ բոցերը ճարճատիւնով դէպի երկինքն էին բարձրանում Մասսաների ամբողջ երկրի վրայ:

Ահա ձեզ գերազանց օրինակ աւամօթ լրբութեան և արութեան քաղաքակրթութիւնը սերմանող ոմանց երոպացիների, որոնք հարկւրաւոր ու հազարաւոր անմեղ մարդկանց սպանում են և բարեպաշտութեամբ ու կարօտով յիշում են զանգակների զօղանջիւնը, որ աստուածապաշտութեան է հրաւիրում ժողովրդին: Ահ, ինչպէս ցոյց տուաւ գերմանական Ռայխստագում տեղի ունեցած խորհրդածութեան խնդիրը, գերմանական քաղաքակրթութեան միւս ներկայացուցիչներն էլ նոյնպէս դաժան և տմարդի էին, ինչպէս Պետերսը:

Աւրոպական դաժանութեան էլ աւելի սառսռեցուցիչ փաստեր մերկացրեց բժիշկ Վինիյէն ֆրանսիական պալատում 1900 թ. նոյեմբերին, Վինիյէն տասն տարի իբրև ղեկավարական բժիշկ ապրեց Ֆրանսիոյ գաղթավայրերում և նա յաջողեցաւ ֆրանսիական դաժանութեան առ վայրենիս սոսկալի փաստերի մի ամբողջ ժողովածու կազմել:

«Սուգանում, ասում է Վինիյէն, շատ ժամանակ չէ, որ ֆրանսիական բանակետից մի քանի քայլ հեռու բնիկների դիակները նեխուում էին գետնի վրայ, օդը բացիւնբերով վարակելով. և այդ՝ շնորհիւ այն բանի, որ ֆրանսիական սպան պատժի խստութիւնն աւելացնելով հրամայել էր պատժուածների դիակները բորենիններին լափելու թողնել՝ խստիւ արգելելով նրանց թաղելը: Այս երեք խոսքերի թշուառների տեսայ. նրանք բառացի կերպով արնքամ էին լինում և ամբողջ մարմնով դողում էին հէնց նորա կրած մտրակի երկու հարիւր հարուածից և այդ վիճակի մէջ նրանց պատժելու էին տանում: Այս չեմ կարող արտայայտել այն խորին խղճահարութեան ըզգացմունքը, որ արծարծում էր այդ եղկելի էակների տեսքը, գրեթէ երեխաների, որոնք թուում էր թէ նոյնքան սակաւ էին հասկանում թէ ինչ է լինելու, որքան սակաւ էին գիտակցում իրենց կատարած յանցաւոր գործողութիւնները: Նրանց մեղադրում էին թէ մի քիչ կորեկ են գողացել հարեւան գիւղում: Ահա մի ուրիշ փաստ, որ Վինիյէն է պատմել. Նետաձիգ նեզրոսների մի խումբ ուղարկուած էր անտառ փայտ կտրելու և երեկոյեան դէմ պիտի դառնար բանակը. սակայն փոթորկի պատճառով նա կարողացաւ յետ դառնալ միայն հետեւեալ օրը:

Յրանսիական սպան հրամայում է կարգին պատժել ճանհնազանդներին: Սկսում է ամենադաժան տանջանքը, որի ժամանակ դահիճներին շարունակ արաղով էին ջրում և նրանց դրամ էին տալիս յատկապէս «յաջողակ» հարուածներին համար: Տանջանքը շարունակուեցաւ այնքան, մինչև որ դժբաղդ վայրենիները կորցրին գիտակցութիւնը: Մի քիչ յետոյ նրանք բոլորն էլ Աստուծուն աւանդեցին իրենց հոգին...

Այս օրինակներով կարելի է երևակայել այն դաժանութիւնը, որով Լեռնացիք խեղդում են վայրենիների դժգոհութեան ամէն մի արտայայտութիւնը: 1897 թուի օգոստոսին Աֆրիկէի վայրենիների մի փոքրիկ զիւղ մի ինչոր բռնում մեղանչել էր ֆրանսիացոց դէմ, որոնք խսկոյն մի վաշտ զօրք էին զրկել այնտեղ: Վայրենիներն ալդ վաշտին ընդառաջ զրկեցին իրենց պատգամաւորներին կատարեալ հնազանդութիւն արտայայտելու և թանգագին ընծաներ բերելու Լեռնացոց: Բայց Լեռնացիք անողսք էին: Մի խաղաղ մութ գիշեր Լեռնացիները վաշտը անտառի և մացառուտների մէջը թաղչելով, անձայն ու աննկատելի կերպով գողունի մօտեցաւ վայրենիներին խաղաղ ննջող գիւղին և չորս կողմից պաշարեց նրան: Սկսուեց վայրենիների դաժան կոտորածը, որոնք յանկարծակիի եկան առանց զէնքի, առանց ինքնապաշտպանութեան միջոցի: Թըշուառ վայրենիները այս ու այն կողմէն էին նետում Լեռնացիներին հալածական: Արնքամ վիրաւորներն աղերսում էին խնայել, բայց ի պատասխանի այդ աղաչանքին սառն սուիներ և զնդակի կարկուտ էր տեղում նրանց վրայ:

Նետաձիգներին, ասում է Վինիյէն, հրաման էր տրուած միայն արական ընակչութիւնը կոտորել, բայց արիւնով հարբածները չէին խնայում նաեւ ոչ մի կնոջ, ոչ մի երեխայի...

Իսկ երբ ծագեց արեւը, նա լուսաւորեց միայն անդամահատուած, արնուլիկ վայրենիների դիակների բազմութիւնը, որոնց մէջ անցուղարձ էին անում Լեռնացիները: Վինիյէն ասում է թէ մի քանի զինուորների խեղդում էր ամօթի ծանր զգացմունքը այս խաղաղ, անզէն մարդկանց ամօթալի կոտորածի համար:

Բնւ է, ընթերցող: Բնւ է որքան այս ծովը, այս անարգուած կմախքների և սպանուած մարդկանց անապատը, որ փռւում են ճաղաքակրթութեան» յաղթական ճանապարհի վրայ:

Թող այս Թարմ արիւնով բուրդ քաղաքակիրթ մարդկանց վայրենութեան և բարբարոսութեան փաստերը ստիպեն խորհել այն մարդկանց, որոնք անկեղծօրէն կարծում են թէ վայրենիները խոյս են տալիս «քաղաքակրթութիւնից», որպէս ժանտախտից լուրջ այն պատճառով, որ յամառ են և անընդունակ հասկանալու քաղաքակրթութեան բերելիք բարիքները:

Յառաջ բերուած փաստերը՝ ևրդպացիների անպէտք և սոսկալի դաժանութիւնից դէպի վայրենիները, մատնացոյց են առնում երկիւղի և զզուանքի հիմնական աղբիւրը, որ տածում են վայրենիները դէպի քաղաքակրթութիւնը, բացատրում են այն վայրենիների կարօտը, վախկոտութիւնը և ատելութիւնը. ուրոնք քաղաքակրթութեան լծի տակն են ընկել:

Այն շարունակ աճող հանդիպումն վայրենի և քաղաքակիրթ ազգերի, որոնց մասին մենք խօսեցինք վերևում, վայրենիների և կիսավայրենիների բազմամիլիօն բազմութիւնը քաղաքակրթելու բարդ և հրապուրելի խնդիրն է դնում ևրդպացիների առաջ: Բայց այդ խնդիրը ոչ միայն կատարելու, այլ նոյն խալ յանձն առնելու համար նախ և առաջ պէտք է վերջ տալ նոյն ևրդպացիների այն բարբարոսութեանը և այն դաժանութիւններին, որոնցով նրանք արատաւորեցին իրենց քաղաքակրթութիւնը...

Թարգմ. ՊԱՏՐԻԿ